

„ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ“-Ը „ԷԶՄԻԱՄԻՆ“- ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

«Երիտասարդ Հայաստան»-ի թիվ 66-ի առաջին էջի վրա արտատպված խմբագրականը «ԷԶՄԻԱՄԻՆ» պաշտոնաթերթի, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հավանության կնիքը կկրե անտարակույս, չկրցինք առանց հուզումի կարդալ: Ծշմարիտ գոհար մըն է ան այս օրերուն, լեցուն հայրենիքի սիրով և զեղուն երախտագիտական զգացումներով դեպի այն պետությունը՝ Սովետական Միությունը, «որը իր փրկարար ձեռքը մեկնեց անդունդի եզրից գտնվող Հայ ժողովրդի մեացորդ բեկորներին և ոչ միայն փրկեց նրան վերահաս սպանդից, այլև հնարավորություն տվեց իր սեփական պետական կյանքով ապրելու, իր ազգային կուլտուրան զարգացնելու, բարեկեցիկ, երջանիկ ու ապահով կյանք ստեղծելու, և այժմ էլ ձեռնամուխ է եղել Հայ աստանդական ժողովրդի դարավոր խղճերի իրականացմանը, նրան մի ընտանիքի շուրջը համախմբելու հնարավորության ստեղծման գործին: Գաղութահայ զանգվածները բերկրանքի անհուն զգացմունքով են հիշում միշտ մեծ Միության սրտից՝ կրեմլից հեռավոր ներգաղթի ավետիսի դողանքը»:

Արդարև մեր օրերու այս մեծագույն հայրենասերի, Հայ կղերականության պատկառելի և պաշտելի դեմքի մտածումներին ու խորհուրդները, ուղղված Սփյուռքի Հայության անխտիր, կուգան ապացուցանել պատմականությունը օրերու, որոնց մեջ կապրինք ազգովին, որպեսզի խորապես գիտակցենք ու կատարենք մեր պարտականությունը, լի ոգևորությամբ և անսասան հավատով:

«Նկատ է գիլ, հնչում ուժգին կանչը ներգաղթի»:

Այսպես կսկսի Վեհափառն իր խոսքը, սրբառառու կոչը բովանդակ Հայության, հայրական անույշ ձայնը, ուր կրսե «Դարձեք որդիք իմ, դարձեք լուռը ձեր հայրական, շարդեցեք ինքմիշտ օտար ժայռերի վրա գաղթացույթ ձեր դարավոր ու վերադարձեք շենդոլ - հայրենիք մեր»:

Ավաղ, որ այս համակ հայրենասիրություն բուրող ձայնը անարձագանք կմնա մեր գաղութի հեկոդեցական ղեկավարության մոտ, — ղեկավարությունը մը՝ որ է՝ առաջինք արձագանք պիտի տալ էջմիածնի, որուն հավատարմական ուխտն ըրած է վաղուց, ու զայն կրկնած դեռ մի քանի ամիսներ առաջ: Ինչո՞վ բացատրել այս դժբախտ իրողությունը: Ինչի՞ վերադրել պատմական այս օրերուն Վեհափառի հրահանգներուն հանդեպ ցույց տրված այս աստիճան զանցառու-

թյունը, այլ չըսենք արհամարհանքը:

Թողելով որ անոնք տան այս հարցերուն պատասխանները, որոնք շատ մոտ կապրին այս գաղութի հեկոդեցական վերին մարմնի, մենք կուգենք նշել այն որ՝ պատմության վկայությամբ՝ գերության և օտարության մեջ տուայտող ժողովուրդներ հաջողած են դառնալ անկախ իրենց հայրենի հողին վրա, երբ լիովին գիտակցած են բախտորոշ շրջաններու պարտադրած թելադրանքին ու լարված ուժերով աշխատանքի անցած՝ մոռնալով ատենի մը համար երկրորդական հետադարձ գործերը:

Այս գիտակցությամբ է, որ Վեհափառն իր խոսքը, հրահանգը հստակ ըրած է թեմական սուաշնորհներու, որպեսզի անոնք գիտնան թե ճանքայնառելի պետք է համարել ներկա պահուն այլ խնդիրներով զբաղվել և միջոցները ներգաղթի գործին տրամադրելու փոխարեն ուրիշ նպատակների հատկացնելը, երբ բազմաթիվ ներգաղթողներ կարիք են գզում հագուստի, ոտնամանի, սննդի, նախադահլաժիսի և այլն: Անբույսառելի է նաև գաղութահայության ուղարկությունը շեղել այլ կողմ. գաղութահայությունը պետք է ունենա միայն և միայն մի սկզբնական՝ Սովետական Հայաստանը, դեպի ուր նա պետք է ուղղի իր սիրագործի հայացքը:

Ընթերցողը ուժեղ հայրենասիրական այս սուղերը կարդալն հետո երբ մեր գաղութի հեկոդեցական վերին իշխանությանը կուղղել իր հայացքը, կնշմարե հստակորեն այն ցավալի իրողությունը, որ երբեք համապատասխան չէ ներկա պատմական ընթացիկը պահանջին, որու վրա շեշտ դրած է էջմիածնի արժանալիոր դահլաժիսը:

Այս օրերան անոնք որ «Ինքի ԵՐԻՏԱՐԴ ԻՆՉ ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՄԱՐ» նշանաբանը իր խորությամբ ըմբռնած լրլլալով հայ ժողովրդի ուղարկությունը այլ տեղ կհրավիրեն, այդպիսիներու մոտ հայրենասիրական զգացումը զորավոր չի կրնար ըլլալ. շատ տկար է մեր կարծիքով:

«Նրեան տառեղ ուղին դա հայ ժողովրդի դարավոր գաղթականությանը վերջ դնող ուղին է հանդիսանում»:

Այդ ուղին պետք է հեշտացնել, լայնացնել ազգահավաքման, Տաճկահայ դատի լուծման աշխատանքին առաջնություն տալով ու հոգևին նվիրումով:

Ա. ՆՈՒՐԶԱՆ

(«Երիտասարդ Հայաստան» հունվար 7, 1947 թ.)